ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՎԱՆԵՍԱ ՍՊԸ-ն ԱԲՆ-ԷԱՃԱՊՁԲ-26/74 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
7	էլեկտրական արդուկներ	էլեկտրական արդուկներ	ՉԺՀ	Արդյունաբերական էլեկտրական մեկ գլանով ավտոմատ արդուկման մեքենա Նոր, չօգտագործված, գործարանային արտադրության, մասնագիտական շահագործման համար նախատեսված էլեկտրական մեկ գլանով արդուկման մեքենա՝ նախատեսված սավանների, սփռոցների, անկողնային սպիտակեղենի և այլ հարթ տեքստիլ արտադրատեսակների արդուկման համար: Սարքավորումը պետք է ապահովի գործվածքի մեքենայացված անցկացումը արդուկման գլանի և տաքացվող մակերեսի միջով՝ համապատասխան ջերմային մշակմամբ: Սարքավորումը պետք է ունենա մեկ արդուկման գլան՝ առնվազն 250 մմ տրամագծով և առնվազն 1000 մմ աշխատանքային երկարությամբ: Գլանը պետք է ունենա արդուկման համար նախատեսված ջերմակայուն ծածկույթ, իսկ գործվածքի

					հետ շփվող արդուկման մակերեսները պետք է պատրաստված լինեն արտադրողի նախատեսած ջերմակայուն և համապատասխան մեխանիկական ամրություն ունեցող նյութերից: Սարքավորումը պետք է ապահովի գործվածքի հավասարաչափ անցկացում արդուկման հատվածով՝ առանց դրա վնասման: Գլանի պտտման և գործվածքի տեղաշարժման մեխանիզմը պետք է լինի էլեկտրական շարժաբերով: Արդուկման աշխատանքային արագությունը պետք է ունենա առնվազն 3 մ/րոպե արագությամբ շահագործման հնարավորություն: Արդուկման համակարգի տաքացման եղանակը պետք է լինի էլեկտրական՝ առնվազն 4,5 կՎտ տաքացման անվանական հզորությամբ: Սարքավորումը պետք է ունենա աշխատանքային ջերմաստիճանի կարգավորման և վերահսկման համակարգ՝ մշակվող գործվածքի տեսակին համապատասխան արդուկման ռեժիմ ընտրելու հնարավորությամբ: Էլեկտրասնուցումը պետք է լինի եռաֆազ՝ 380–415 Վ, 50 Հց, կամ սարքավորումը պետք է ունենա արտադրողի կողմից նախատեսված համատեղելի էլեկտրասնուցման տարբերակ՝ տեղադրման վայրի էլեկտրական ցանցին համապատասխան: Սարքավորումը պետք է ունենա պաշտպանիչ հողանցման հնարավորություն, աշխատանքային ջերմաստիճանի վերահսկում, գերտաքացումից պաշտպանություն, վթարային կանգառի միջոց և գործվածքի մուտքային հատվածում օպերատորի ձեռքերի ու մատների վնասումը կանխող պաշտպանիչ համակարգ: Գլանի գործարկումը և կանգնեցումը պետք է հնարավոր լինի իրականացնել

					կառավարման վահանակից, ոտնակով կամ արտադրողի նախատեսած համարժեք անվտանգ եղանակով: Սարքավորման արտաքին եզրաչափերը (լայնություն × խորություն × բարձրություն) պետք է լինեն ոչ ավելի, քան 2000 × 1500 × 1500 մմ, իսկ սարքավորման զուտ քաշը՝ ոչ ավելի, քան 500 կգ: Սարքավորումը պետք է ունենա գործվածքի մուտքային հարմար աշխատանքային հատված և արդուկված սպիտակեղենի անվտանգ դուրսբերման հնարավորություն: Մատակարարվող սարքավորումը պետք է լինի ամբողջական գործարանային կոմպլեկտավորմամբ՝ ներառյալ արդուկման գլանը, տաքացման և կառավարման համակարգերը, անհրաժեշտ պաշտպանիչ սարքերը, էլեկտրական միացման տարրերը և բնականոն շահագործման համար անհրաժեշտ մյուս պարագաները: Սարքավորումը պետք է ունենա գործարանային նույնականացման տվյալներ՝ արտադրողի և մոդելի նշմամբ: Մասնակիցը պարտավոր է ներկայացնել առաջարկվող սարքավորման արտադրողի անվանումը, ապրանքանիշը և մոդելը: Մատակարարումը պետք է ներառի սարքավորման տեղափոխումը մինչև պատվիրատուի նշած հասցե, բեռնաթափումը, տեղադրումը, միացումը, գործարկումը և աշխատանքային փորձարկումը: Մատակարարը պարտավոր է ստուգել տեղադրման վայրի էլեկտրական ցանցի համապատասխանությունը սարքավորման պահանջներին, ապահովել անվտանգ միացումը, ստուգել գլանի պտտումը, տաքացման և ջերմաստիճանի կառավարման համակարգերը,

				վթարային կանգառը և պաշտպանիչ սարքերի աշխատանքը: Պետք է իրականացվի փորձնական արդուկում տեքստիլ արտադրանքով և պատվիրատուի առնվազն երկու աշխատակցի գործնական ուսուցում: Սարքավորման ամբողջական երաշխիքային ժամկետը պետք է կազմի առնվազն 12 ամիս՝ շահագործման հանձնման ակտի ստորագրման օրվանից: Երաշխիքով ընդգրկված անսարքությունների ախտորոշման, վերանորոգման, անհրաժեշտ պահեստամասերի և մասնագետի այցի ծախսերը կրում է մատակարարը: Մատակարարը պետք է ապահովի երաշխիքային սպասարկումը ՀՀ տարածքում՝ սեփական կամ պայմանագրային սպասարկման ռեսուրսներով: Սարքավորման հետ պետք է տրամադրվեն շահագործման, տեխնիկական սպասարկման և անվտանգության ցուցումները՝ հայերեն, ռուսերեն կամ անգլերեն, ինչպես նաև երաշխիքային փաստաթղթերը: Սարքավորման ընդունումն իրականացվում է մատակարարված սարքավորման նույնականացման, տեխնիկական ցուցանիշների ստուգման և գործնական փորձարկման արդյունքների հիման վրա՝ համապատասխան հանձնման-ընդունման փաստաթղթերի ստորագրմամբ: Օգտագործված, վերանորոգված, վերականգնված կամ սույն տեխնիկականբնութագրով սահմանված պահանջներին չհամապատասխանող սարքավորումը չի ընդունվում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ВАНЕСА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱԲՆ-ԷԱՃԱՊՁԲ-26/74 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
7				